ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Երևան «09» նոյեմբերի 2023թ.

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/36 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի շրջանակներում նախաձեռնած գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կարիքների համար՝ տեխնիկական սարքերի /մաս 1/ ձեռքբերման նպատակով 2022 թվականի հուլիսի 21-ին հայտարարվել է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/36 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2022 թվականի օգոստոսի 4-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստում մրցույթի մասնակից «Սադոյան» ՍՊԸ /ՀՀ, Ք.Երևան, Չարենցի 40, բն. 30, ՀՎՀՀ՝ 02647494/ 1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13,14,15,16,17,18,19,20,21 չափաբաժինների մասով որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է ընտրված մասնակից: 2022 թվականի օգոստոսի 19-ին հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: 2022 թվականի օգոստոսի 22-ին կողմերի միջև կնքվել է ապրանքների մատակարարման պայմանագիր, որով «Սադոյան» ՍՊԸ պարտավորվել է մատակարարել պայմանագրով սահմանված ապրանքները 6, 16 և 17 չափաբաժինների մասով պայմանագիրը ստորագրելուց հետո 120 օրվա ընթացքում, իսկ 1,2,3,4,5,7,8,9,10,11,12,13,14,15,18,19,20,21 չափաբաժինների մասով պայմանագիրը ստորագրելուց հետո 60 օրվա ընթացքում: 2022 թվականի հոկտեմբերի 15-ին կողմերի միջև կնքվել է համաձայնագիր, որով 1, 7 ,9, 15, 18, 19, 20 և 21 չափաբաժինների մասով պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները երկարացվել են ևս 30 օրացուցային օրով:

Մասնակցի կողմից 1-ին, 2-րդ և 15-րդ չափաբաժինների մասով մատակարարումը մինչև օրս չի իրականացվել, որով խախտվել է պայմանագրի հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամկետները:

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ support@armtv.com
www.1tv.am

ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով «Սադոյան» ՍՊ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.11 կետը՝ Ընկերությունը միակողմանի լուծել է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/36-1 գնման պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 6-ին ծանուցել է «Սադոյան» ՍՊ ընկերությանը պայմանագիրը միակողմանի դադարեցնելու մասին, որը հրապարակվել է նաև gnumner.am կայքում:

Ելնելով վերոգրյալից և Հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա ենթակետը (խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը):

ՈՐՈՇԵՑԻ

«Սադոյան» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Առդիր՝ 1 (մեկ) փաթեթ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Հ. Մովսիսյան**

Կատարող՝

Գործադիր տնօրենի տեղակալ-

ֆինանսական տնօրեն

Արարատ Հակոբյան

Հեռ՝ 010 65 00 15 /1-58/

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ support@armtv.com